## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 58

<<19>> նոյեմբերի 2018 թվական                                        գյուղ Մայիսյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԵԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ, 08-0106-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ 0.34 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի N 186-Ն հրամանով հաստատված «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգի» 9-րդ կետի 5-րդ ենթակետը և հաշվի առնելով, որ Մարմաշեն համայնքի Քեթի բնակավայրի վարչական սահմաններում 08-0106-0008 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների 0.34000 հեկտար հողամասի վրա առկա շենք շինությունը: Հայատանի Հանրապետության 2005 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1794-Ն որոշման հավելվածի ցանկից դուրս է մնացել, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Քեթի բնակավայրի վարչական սահմններում 08-0106-0008 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների 0.34000 հեկտար հողամասի վրա առկա շենք շինությունը ճանաչել համայնքի սեփականություն:

2. Համայնքի ղեկավար Կարեն Արշակյանին.

Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ անշարժ գույքի նկատմամբ համայնքի իրավունքները պետական գրանցման ենթարկելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | *Կողմ՝ 8* | *Դեմ՝* | *Ձեռնպահ՝ 1* |
|---|---|---|---|
| ՄԱՆՈՒԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝ | V | | |
| ՌՈՒՍՏԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝ | V | | |
| ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝ | V | | |
| ԱՐՏՅՈՄ ՋԱՔԱՐՅԱՆ՝ | V | | |
| ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ | V | | |
| ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝ | V | | |
| ԿԱՄՈ ՂԱՆԴԻԼՅԱՆ՝ | V | | |
| ՋԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝ | V | | |
| ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝ | | | V |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«19» նոյեմբերի 2018 թվական

գյուղ Մայիսյան